«ՆՈՐ ՈՒՂԻ» ՊԱՐԲԵՐԱԳԻՐՔԸ

(1945—1947)

Մ. Ա. ԲԱԲԼՈՅԱՆ

«Նոր ուղի» պարբերագիրքը սկսեց լույս տեսնել 1945 թ. սկզբներին, Բեյրութում, մի խումբ երիտասարդների ջանքերով։

Երկրորդ համաշխարհային պատերազմն այդ օրերին դեռ շարունակվում էր, բայց նրա ելքը արդեն պարզ էր։ Ֆաշիզմը նահանջում էր, մեկը մյուսի ետևից ազատագրվում էին Եվրոպայի և աշխարհի այլ մասերի օկուպացված երկրների ժողովուրդները։ Ռազմական այն գործողությունները, որ տարվում էին հիտլերյան զորքերի դեմ Գերմանիայում, Սովետական Միության վճռական մասնակցությամբ, օրեցօր մոտեցնում էին երազած հաղթանակը։

Ժողովուրդների գիտակցության մեջ այդ հաղթանակը նվաճվել էր ավելի վաղ և դեմոկրատական ուժերի չտեսնված վերելք էր առաջ բերել ամբողջ աշխարհում։ Դեմոկրատական ուժերի վերելք էր ապրում և Արաբական Արևելքը։

Սիրիան և Լիբանանը մինչև այդ արդեն ձեռք էին բերել իրենց անկախությունը։ Բայց այդ անկախությունը լիակատար չէր, քանի որ նրանց հողում դեռ օտար զորքեր էին գտնվում։ Նրանք ամբողջ ուժով պայքարում էին, որպեսզի օտար զորամասերը դուրս բերվեին իրենց տերիտորիայից։ Այդ ճանապարհով միայն արաբները կարող էին տնօրինել իրենց բախտը սեփական երկրում։

Արաբ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը մոտ ու հարազատ էր նաև հայ աշխատավորներին, որոնք 1915 թ. կոտորածներից ու տեղահանումներից հետո մեծ զանգվածներով սպրում էին այդ երկրներում ու վայելում արաբների համակրանքը։ Հայ աշխատավորները լավ էին գիտակցում, որ արաբների ազատագրությունը, նրանց ձեռք բերած սուվերեն իրավունքները և դեմոկրատական նվաճումները կենսական նշանակություն ունեն նաև իրենց համար։ Այստեղից էլ այն բարեկամությունը, որ ստեղծվել էր հայ և արաբ ժողովուրդների միջև, այն համատեղ պայքարը, որ արաբ ժողովրդի հետ միասին մղում էին հայ առաջադեմ խավերը օտարերկրյա իմպերիալիստների ոտնձգությունների դեմ։

Ազատագրական վերընթաց շարժումը, երկրորդ աշխարհամարտում դեմոկրատական ուժերի հաղթանակի պայմաններում, բարենպաստ հող էր ստեղծել դեմոկրատական մտքի ծավալման համար նաև լիբանանահայ գաղութում։ «Նոր ուղի» պարբերագրքի հանդես գալը դրա արտահայտություններից մեկն էր։

«Նոր ուղի»-ն առաջին և միակ գրական-առաջադիմական պարբերականը չէր, իհարկե, Արաբական Արևելքում։ Այդ շրջանում և դրանից առաջ հրատարակվել էին և շարունակում էին լույս տեսնել «Ժողովուրդի ձայն» հասարակական-գրական ամսաթերթը Բեյրութում (1943), «Դեպի երկիր» պարբերագիրքը Հալեպում (1945--1946), «Աշխատանք» գրական երկամսյան Կահիրեում (1944— 1946) և այլ պարբերականներ։

Գրական-հասարակական երիտասարդ գործիչների այն շրջանակը, որ հիմնադրեց «Նոր ուղի»-ն, առաջադեմ և կայուն հայացքների տեր էր և մեծ հավատ ուներ վերածնված Հայաստանում իր հայրենիքը կառուցող հայ ժողովրդի ապագայի նկատմամբ։ Ճիշտ է, «Նոր ուղի»-ն երկար կյանք չունեցավ և շատ բան չկարողացավ անել լիբանանահայ գրական-հասարակական կյանքում, բայց իր առաջադիմական, կայուն դիմագիծը, ու, մանավանդ, իր անվերապահ սերը սովետական հայրենիքի հանդեպ պահպանեց մինչև վերջ։

Խոսելով իր առջև դրված խնդիրների մասին, պարբերագիրքը իր առաջին համարի «Մեր առաջադրանքը» խմբագրական հոդվածում գրում է.

«Նոր ուղի»-ն մարդկության ապագա երջանկության հավատացող հայկական հրատարակություն մրն է, որ իր կարելի բաժինը բերելու պիտի ձգտի այդ նպատակին»։

Խմբագրականը նշում է, որ «Նոր ուղի»-ն, խորին հարգանք տածելով հայ մշակույթի և գրականության անցյալի հանդեպ, կձգտի նպաստել նրանց ներկա և ապագա նվաճումներին, միաժամանակ կծանոթացնի իր ընթերցողներին ինչպես արաբական հարուստ գրականությանը,

այնպես էլ հաղորդակից կդարձնի ժամանակակից դրական ու սոցիալ-հասարակական նոր գրքերին և ուսումնասիրություններին։

Այս առաջադրանքներով հրապարակ իջավ «Նոր ուղի»-ն։ Նրա շուրջը համախմբված երիտասարդները համակված էին իրենց խոսքն ասելու և իրենց գաղափարները հասարակայնությանը հասցնելու մեծ ցանկությամբ։ Ու թեև այդ խոսքը երբեմն չէր հասնում արվեստի անհրաժեշտ բարձրության ու վարպետության, երբեմն էլ պարզունակ էր ու շատ անգամ՝ հապճեպ, որ թելադրվում էր այդ օրերի իրադարձությունների բուռն ընթացքով, սակայն միշտ անկեղծ էր՝ տոգորված աշխատավոր մարդկության ու հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հանդեպ խանդավառ սիրով և անձնականը հասարակականին զոհելու երիտասարդական ռոմանտիկայով։

Առաջին տարին, 1945 թ., «Նոր ուղի»-ն լույս տեսավ պրակներով, ընդամենը չորս գրքույկ (Ա—Դ, 50—56 փոքրածավալ էջերի սահմաններում)։ Հաջորդ՝ 1946 թ. «Նոր ուղի»-ի հրատարակությունը ավելի կանոնավորվեց, լույս տեսավ վեց գիրք (երկամսյա), ավելի մեծ չափսով։ 1947-ին լույս ընծայվեց պարբերականի մեկ համար միայն։ Եվ դա եղավ վերջինը։

1946—1947 թթ. «Նոր ուղի»-ի գործուն աշխատակիցների մեծ մասը ներգաղթեց Հայաստան։ Այդպիսով, պարբերագիրքն ունեցավ մոտ երկուսուկես տարվա կյանք, լույս ընծայվեց ընդամենը տասնմեկ համար։

«Նոր ուղի»-ի առաջին երկու համարները խմբագրել է Գրիգոր Քեշիշյանը։ Այնուհետև պարբերագրքի խմբագրական կազմի մեջ, բացի նրանից, տարբեր ժամանակներում մտել են Գրիգոր Լիսվանը (Բերմեղճյան), Հարություն Գայայանը, Հրաչյա Պուճիգանյանը, Վարսենիկ Պոյաճյանը (Շաքե Վարսյան) և Փանոս Ջագրյանը։ Հրատարակվել է «Նոր ուղի»-ն 1000—1200 օրինակ տպաքանակով, որ փոքր թիվ չէ սփյուռքի պայմաններում։ Պարբերագիրքը հիմնականում տարածվել է Լիբանանում ու Սիրիայում և մասամբ Կիպրոսում։ Փոքրաթիվ քանակով «Նոր ուղի»-ն ուղարկվել է հայրենիք և սփյուռքի տարբեր գաղութները։

«Նոր ուղի»-ն առավելապես գրական պարբերագիրք է։ Նրա համարները բովանդակում են մեծ մասամբ գեղարվեստական գործեր՝ պատմվածքներ, ակնարկներ, բանաստեղծություններ։ Քաղաքական-հասարակական բովանդակություն ունեցող նյութերի թիվը այնտեղ մեծ չէ, բայց դրանք հետաքրքիր են ու բնորոշ նախ՝ պարբերագրքի պաշտպանած քաղաքական-գաղափարական հայացքների և երկրորդ՝ օրվա հրատապ խնդիրներին անմիջապես արձագանքելու տեսակետից։

«Նոր ուղի»-ն հիմնադրման օրից անդրադարձել է արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին։ Այս հարցին պարբերագիրքը նվիրել է երկու հոդված, որոնց մեջ նախ շեշտվում է դեմոկրատական ուժերի վերելքն ամբողջ աշխարհում՝ ֆաշիստական Գերմանայի ու նրա զինակիցների ջախջախումից հետո։ «Պատերազմեն ետք,—ասված է այնտեղ,—աշխարհի բոլոր անկյուններուն մեջ, մանավանդ գաղութային և կիսագաղութային երկիրներուն մեջ, ժողովուրդները, իրարմե քիչ մը ավելի սուր կամ մեղմ ձևով, հրապարակ դրին նոր ձևով կառավարվելու օտարի իշխանությունը ազգային իշխանությունով փոխարինելու, այլ խոսքով, ազատ, անկախ և ինքնիշխան ապրելու հարցը»[1]։

Անցնելով արաբական հարցին, պարբերագիրքը նշում է, որ ազգային վերելք են ապրում և արաբական ժողովուրդները, որոնք երկար ու համառ պայքար են մղել իրենց ազատագրության համար և այդ օրերին (1945—1946 թթ.), մասնավորապես Սիրիայում և Լիբանանում, առաջ էին քաշում լիովին սուվերեն լինելու իրենց իրավունքը[2]։

Սակայն արաբական ազատագրական շարժումն ուներ իր թշնամիները՝ ներքին և արտաքին։ Պարբերագիրքը անդրադառնում է այն վտանգին, որ գալիս էր արտաքին թշնամիներից՝ արևմտյան պետություններից և հատկապես անգլիական իմպերիալիզմից։ Արևմտյան իմպերիալիզմը, ինչ խոսք, չէր կարող վերականգնել նախկին վիճակը, այսինքն իր լիակատար տիրապետությունը Արաբական Արևելքում, բայց նա ամեն միջոց գործադրում էր իր զինվորական և քաղաքական տիրապետությանը օրինական ձև տալու համար, աշխատում էր խափանել ազգային-ա-

1 «Նոր ուղի», հատ. 11, էջ 9։

2 Սիրիան և Լիբանանը անկախ պետություններ էին հայտարարվել դեռևս 1941-ին, սակայն իշխանությունը փաստորեն գտնվում էր անգլո-ֆրանսիական օկուպացիոն ուժերի ձեռքին։ 1943-ին արաբական այդ երկրները վերջնականապես ազատագրվեցին մանդատային ռեժիմից և ստեղծեցին իրենց ազգային կառավարությունները, բայց օտարերկրյա զորքերը դեռ մնում էին այնտեղ։

գատագրության և անկախության շարժումները, մանավանդ ժողովրդական լայն զանգվածների մասնակցությունը այդ շարժումներին։

Պարբերագիրքը նշում է նաև արաբ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին Սովետական Միության ցույց տված օգնությունը, հիշատակելով վճռական այն պաշտպանությունը, որ հանդես բերեց սովետական կողմը Անվտանգության խորհրդում ի նպաստ Սիրիայից և Լիբանանից օտար զորքերի դուրս բերման։

Սովետական Միության փայլուն հաղթանակը Հայրենական մեծ պատերազմում, հայ ժողովրդի անվեհեր զավակների ցուցաբերած քաջագործությունները այդ վիթխարի դոտեմարտում և ապա հետպատերազմյան զանգվածային հայրենադարձը շատ մեծ ազդեցություն ունեցան ամբողջ սփյուռքահայության վրա։ Արտասահմանում ապրող հայ աշխատավորները և առաջադեմ մտավորականությունը ավելի սերտորեն կապվեցին հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ։

Արձագանքելով սփյուռքահայության շրջանում հայ ժողովրդի անցյալի և Սովետական Հայաստանի հանդեպ եղած մեծ հետաքրքրությանը, «Նոր ուղի»-ն տպագրում է մի շարք հոդվածներ ու անկարկներ այդ թեմաներով։ Ուշագրավ են այդ տեսակետից «Հայկական բարձրավանդակի հնագույն ժողովուրդներու ազատագրական պայքարը օտար ներխուժողներու դեմ», «Հայ ժողովուրդին ազգային կազմավորումը», «Հայ ժողովուրդի դարավոր պայքարը գոյության և անկախության համար» ակնարկները, որոնց մեջ հանրամատչելի և շատ ընդհանուր ձևով ուրվագծված է հայ ժողովրդի դարավոր պատմությունը։ Պարբերագիրքը չի հետևում հայ ժողովրդի հեռավոր անցյալի ավանդական առասպելախառն պատմելաձևին, այլ նյութը մատուցում է հենվելով սովետահայ պատմագիտական ուսումնասիրությունների վրա։ Մի քանի խոսքով անդրադառնալով Հայաստանի նորագույն պատմությանը, պարբերագիրքը նշում է, որ հայ ժողովրդի ազգային անկախությունը ձեռք բերվեց միայն ռուս ժողովրդի և Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ։

Հետպատերազմյան՝ 1946 թ. խոշորագույն իրադարձությունը սփյուռքահայության կյանքում զանգվածային ներգաղթն էր, որի վերաբերյալ եղած որոշումը հրապարակվել էր դեռևս նախորդ տարվա նոյեմբերին։ «Նոր ուղի»-ն բազմաթիվ նյութեր է տպագրել ներգաղթի մասին, նվիրելով այդ թեմային նաև հատուկ համար։ Հիշյալ համարի «Ներգաղթ» խմբագրական հոդվածում պարբերագիրքը, խոսելով անցյալում հայ ժողովրդի անհավասար պայքարի ու հարկադրյալ արտագաղթի մասին, շեշտում է պատմական այն բացառիկ նշանակությունը, որ ուներ ներգաղթը հետպատերազմյան այդ օրերին։ Այդ նույն համարում պարբերագիրքը տպագրել է Սովետական Հայաստանի պետական գործիչների, մտավորականների ու աշխատավորների, այդ թվում՝ Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Հր. Աճառյանի, Մ. Սարյանի, Ա. Խաչատրյանի և ուրիշների ասույթները ներգաղթի ու նրա նշանակության մասին։

1946 թ. սկսված հայրենադարձությունը, ինչպես հայտնի է, մեծ արձագանք գտավ նաև միջազգային մասշտաբով։ Այդ մասին արտահայտվեցին տարբեր երկրների մամուլի օրգանները, զանազան կազմակերպություններ, պետական և հասարակական գործիչներ, ընդգծելով նրա մեծ նշանակությունը հայ ժողովրդի համար։ «Սովետ Միության ծոցին մեջ,—գրում է աշխարհահռչակ գիտնական Ֆրեդերիկ Ժոլիո-Կյուրին,—Հայաստան ցույց տվավ մեծ հառաջադիմություն մը տնտեսական և մշակութային մարզերու մեջ։ Սրտանց կմաղթեմ որ 1914—1918-ի դեպքերեն ետք, ամբողջ աշխարհի մեջ ցրված հայերը, իրենց ներկա հայրենիքին մեջ գտնեն վերածնության կեդրոն մը և հոն ապրելու կարելիություն, զարգացնելու համար իրենց նախահայրերուն երիցս հազարամյա ստեղծագործության արժանի քաղաքակրթություն մը»[3]։

Հայերի և ներգաղթի մասին մեծ ջերմությամբ է խոսել Լիբանանի Կոմունիստական կուսակցության ղեկավար Ֆարաժալլա Հրլլուն. «Հայ ժողովուրդը, որ նպաստեց Լիբանանի պայքարին,— ասել է նա,— շահեցավ ուրիշ ճակատամարտ մը, կարևոր ու մեծ ճակատամարտ մը ընդդեմ հետադիմության և խավարի ուժերուն։ ...Մենք, որ Սովետ Հայաստանի ընդմեջեն կտեսնենք Լիբանանի ապագան, կ'ըմբռնենք ձեր արդար և բնական կարոտը վերադառնալու Հայաստան և կհրճվինք ձեր այս բախտավորության համար»[4]։ «Նոր ուղի»-ն բերում է քաղվածքներ նաև Գեորգի Դիմիտրովից, անգլիական պառլամենտի անդամ Սիլվերմանից և ուրիշներից։

Վերջում «Նոր ուղի»-ն ժամանակագրական կարգով տվել է տեղեկություններ ներգաղթի վերաբերյալ որոշումների և ներգաղթի ընթացքի մասին, որոնք յուրովի հետաքրքրական են և օգտակար կլինեն հայերի հայրենադարձության ապագա ուսումնասիրողներին։

---

3 «Նոր ուղի», հատ. 9, էջ 189։

4 Նույն տեղում, էջ 191։

«Նոր ուղի»-ում տպագրված գեղարվեստական համարյա բոլոր նյութերը, արձակ և չափածո, տոգորված են հայրենասիրությամբ, նվիրված են հայ ժողովրդին, նրա սովետական հայրենիքին և սփյուռքում ապրող հատվածի կյանքին, մասնավորապես հայրենադարձության կարևոր երևույթին, որ այդ շրջանում համակել էր ամբողջ գաղութահայությանը, սկսած Մերձավոր Արևելքից մինչև գույգ Ամերիկաները։

Պարբերագիրքը խմբագրող և նրա շուրջը համախմբված գրողները, գրասերները և հասարակական կյանքով ապրող երիտասարդները այդ նյութերի մեջ մի գլխավոր նպատակ են հետապնդում՝ Լիբանանում, Սիրիայում և հարևան երկրներում ապրող հայերի մեջ վառ պահել հայրենասիրության գաղափարը, լայնորեն ծանոթացնել նրանց Սովետական Հայաստանի տնտեսական և մշակութային վերելքին, գրականությանը, արվեստին, սատարել հայրենադարձի մեծ գործին։ Այդ բոլորն արտահայտվում է ինչպես պարբերագրքում լույս տեսած բանաստեղծություններում, այնպես էլ պատմվածքներում և ակնարկներում։

«Նոր ուղի»-ի գեղարվեստական նյութերի կենտրոնական թեման հայրենիքի սերն է, նրանց հատկանշական կողմը կենսահաստատ ոգին է, անխախտ հավատը պայծառ գալիքի հանդեպ։ Վհատության, լքվածության, հուսաբեկ տվայտանքի տրամադրությունները իսպառ բացակայում են պարբերագրրի էջերից։

Մեծ ոգևորությամբ է ընկալում «Նոր ուղի»-ն հայ ժողովրդի եռանդուն մասնակցությունը ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող ահեղ դոտեմարտին։ Շատ էջեր են նվիրված մասնավորապես հայկական Թամանյան դիվիզիային։

Գերմանական ֆաշիզմի խժդժությունները Եվրոպայում և Սովետական Միության ժամանակավորապես գրավված տերիտորիայում ատելության ալիք էին բարձրացրել արտասահմանի հայ առաջադեմ զանգվածների մեջ։ Այդ «քաղաքակիրթ» բարբարոսությունը ահազանգում էր ոչ միայն ժողովուրդներին սպառնացող նոր վտանգի մասին, այլև թարմացնում սփյուռքահայության մեջ 1915 թ. ապրիլյան եղեռնի մահասարսուռ հուշերը։ Շատ էին նմանություններն ու ընդհանրությունները։ Եվ զարմանալի չէ, որ պարբերագիրքը բանաստեղծություններ ու արձակ էջեր է նվիրում հայ ժողովրդի մասնակցությանը Հայրենական մեծ պատերազմին։

Պարբերագրքի գեղարվեստական նյութերի մի խոշոր մասը նվիրված է հայրենադարձությանը, մի երևույթ, որի նշանակությունը դժվար էր գերագնահատել հայ ժողովրդի կյանքում։ Սփյուռքահայությունը միշտ էլ կանգնած է եղել ձուլման վտանգի առաջ և իր փրկությունը որոնել է հայրենադարձության մեջ։

Այդ հարցին նվիրված նյութերում, բնականաբար, արծարծվում է նրա հետ սերտորեն աորնչվող ձուլման խնդիրը։ Կան առանձին պատմվածքներ, որոնց թեման հենց ձուլման վտանգն է։ Այդ արված է ավելի ևս շեշտելու համար ներդաղթի մեծ նշանակությունը։

Ներդաղթին նվիրված բանաստեղծությունները սովորաբար ներքին ապրումների, սպասումի, հայրենի երկիրը վերադառնալու երջանկության և սովետական պետության հանդեպ երախտագիտության զգացմունքների արտահայտություններ են, որոնք արտացոլում են սփյուռքահայ զանգվածների այդ օրերի հոգեվիճակը։ Ու թեև տարբեր են դրանք արտահայտչական իրենց եղանակով և գեղարվեստական արժեքով, սակայն բոլորն էլ համակված են միևնույն խանդավառ տրամադրությամբ ու վեհ զգացումներով, ինչպես օրինակ, Արամ-Արմանի «Վերադարձի երգ» բանաստեղծությունը.

Աշխարհն ամբողջ՝ աչքերուս մեջ, հիմա գրկած կուգամ քեզի,
Արյունս՝ հորդ, բռունցքիս՝ պիրկ ու սիրտս՝ բաց կուգամ քեզի։
...Ընդունե զիս, երկիր իմ նոր՝ իմաստությամբ ու կաթոգին,
Հոկտեմբերիդ դրոշին տակ երգիս պարզած կուգամ քեզի...»

«Նոր ուղի»-ի գեղարվեստական արձակում ևս տիրապետող թեման հայրենադարձությունն է։ Արվեստի տեսակետից արձակ գործերը շատ չեն տարբերվում բանաստեղծություններից, նրանց մեջ նույնպես թույլ, հապճեպ գրված պատմվածքներ շատ կան, բայց այդ վիճակում էլ նրանք վերարտադրում են ներդաղթի ընդհանուր, խանդավառ մթնոլորտը։ Այդ պատմվածքները բավականին բազմազան են իրենց բովանդակությամբ։ Նրանցում արտացոլվել են և՛ սփյուռքահայ կյանքը իր անմխիթար կողմերով՝ նյութական անապահովություն, անգործություն, անհոգանկարայնություն, ուսման դժվարություններ աճող սերնդի համար, և՛ հայրենիքի կարոտ ու

5 Նույն տեղում, էջ 218։

հայրենադարձության պատկերներ՝ սպասում, նախապատրաստություններ, մեկնում՝ մարդկային տարբեր բնավորությունների, ապրումների, հույզերի ինքնատիպ արտահայտություններով, և՛ սեր ու առօրյա կոնֆլիկտներ, որոնք հյուսվում են ներդաղթին ու ստեղծում կենսական հետաքրքիր իրադրություններ, և՛, վերջապես, հայրենասիրության գաղափարը, օտարությունից հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու հոգեկան բերկրանքը։

«Նոր ուղի»-ն իր էջերը տրամադրել է նաև սովետահայ գրողներին։ Սովետահայ մոտ քսան հեղինակ է ներկայացված պարբերագրքում՝ Ավ. Իսահակյան, Գ. Սարյան, Հր. Քոչար, Ս. Կապուտիկյան, Ն. Զարյան, Հ. Շիրազ, Գ. Բորյան, Գ. Էմին, Սարմեն, Ս. Տարոնցի, Ադավնի և ուրիշներ, ըստ որում դա արված է ոչ այնքան այդ հեղինակներին սփյուռքի ընթերցող հասարակայնությանը ծանոթացնելու և նրանց ժողովրդականացնելու նպատակով, այլ, առաջին հերթին, պարբերագրքի պաշտպանած գաղափարների պրոպագանդման և ամրապնդման համար։ Այդ մասին է խոսում ամենից առաջ ընտրված նյութերի թեմատիկ բովանդակությունը։ Դրանք մեծ մասամբ հայրենասիրական և հայրենադարձին նվիրված բանաստեղծություններ են, որոնք արձագանքում են օրվա հրատապ հարցերին։

«Նոր ուղի»-ն իր էջերում տեղ է տվել և այլ ժողովուրդների գրական-գեղարվեստական ստեղծագործություններին։ Սակայն տպագրված նյութերը ցույց են տալիս, որ պարբերագիրքը այդ հարցում ծրագրված նպատակ չի հետապնդել, այլ ավելի շատ արձագանքել է օրվա գրական-հասարակական իրադարձություններին։

Լայն տեղ է տրված «Նոր ուղի»-ում ռուսական գրականությանը։ Ռուս գրականության վերաբերյալ անդրանիկ հոդվածը պարբերագիրքը տպագրել է իր առաջին իսկ համարում։ Այն մի համառոտ ակնարկ է՝ նվիրված Ալեքսեյ Տոլստոյի կյանքին ու գրական ստեղծագործությանը։ «Նոր ուղի»-ն բարձր է դասում հեղինակի «Տառապանքների ուղիով», «Իվան Ահեղ» և «Պետրոս Մեծ» վեպերը, որոնք «...իրեն ապահովեցին միջազգային համբավ և փառք»։ Տալով «Պետրոս Մեծ»-ի գնահատականը, պարբերագիրքը վկայակոչում է Մ. Գորկուն, որն այն համարում է սովետական ռուս գրականության իսկապես առաջին պատմական վեպը, որ կոչված է երկար ժամանակ որպես տիպար մնալու։

«Նոր ուղի»-ն իր 1946-ի № 3 (7)-ի կեսը նվիրել է Մ. Գորկուն՝ նրա մահվան տասներորդ տարեդարձի առթիվ։

Խոսելով մեծ գրողի ստեղծագործության համաշխարհային նշանակության մասին, պարբերագիրքը իր խմբագրական հոդվածում ընդգծում է առաջին հերթին Գորկու արվեստի հասարակակաց բնույթը, նրա անզիջում պայքարի ոգին։ «Իրեն համար արվեստը»,—գրում է պարբերագիրքը,—կյանքին գործոն կերպով միջամտելու միջոց մըն էր, կյանքը փոխելու միջոց։ Ան կգրեր, որովհետև չէր կարող լռություն պահպանել այն բաներու մասին, զորս կտեսներ, չէր կարող չգործածել իր ձեռքերուն մեջ դրված և ահռելի ուժ պարունակող այդ զենքը՝ գրիչը»։

Մի քանի համար հետո պարբերագիրքը նորից է անդրադառնում Մ. Գորկուն, տպագրելով մի չատված երիտասարդ բանվորներին ուղղված նրա նամակից։

Գրաքննադատական նյութերը «Նոր ուղի»-ում զգալի տեղ են բռնում։ Խմբագրությունը իր դրական հայացքները հիմնավորող հատուկ հոդվածներով հանդես չի եկել։ Բր հավատամքը նա արտահայտել է այլևայլ հոդվածներում, մասամբ գրախոսականներում և, թերևս ամենից ավելի, նյութերի ընտրության մեջ։

Բրական-տեսական բազմաթիվ հարցեր են շոշափվում Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարի նյութերում, որոնց «Նոր ուղի»-ն սիրով տեղ է տվել իր էջերում։ Այդ նյութերի տպագրության փաստն ինքնին ցույց է տալիս, թե գեղարվեստական ինչ սկզբունքներ էր պաշտպանում պարբերագիրքը։

«Նոր ուղի»-ում տպագրված գրա-քննադատական նյութերը կազմված են հիմնականում հայ գրողներին կամ նրանց առանձին երկերին նվիրված հոդվածներից։ Գրախոսականներ, իսկական առումով, պարբերագրքում չկան։ Եղածը շատ համառոտ, աննոտացիոն կարգի արձագանքներ են լույս տեսած մի քանի գրքերի մասին։

Վերը հիշատակված նյութերում լայն տեղ է տրվում սովետահայ գրական կյանքին, որ վկայում է գաղութահայ շրջանների աճող հետաքրքրությունը հայրենի մշակույթի հանդեպ։ Ուշագրավ է այդ տեսակետից, օրինակ, Խ. Սարգսյանի հոդվածը՝ նվիրված ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտին, որտեղ հեղինակը մանրամասնորեն խոսում է ինստիտուտի աշխատանքների ու հեռանկարների մասին։

1945—1946 թթ. սփյուռքահայ հասարակայնությունը, և հատկապես մամուլը, սիրով արձագանքեց Սայաթ-Նովայի մահվան 150-ամյա հոբելյանին, որ լայնորեն նշվեց Սովետական Հա-

յաստանում։ Բազմաթիվ հոդվածներ տպագրվեցին թերթերում և ամսագրերում մեծ երգչի մասին։ «Նոր ուղի»-ն ևս պատշաճ ձևով նշեց հայ մշակույթի այդ կարևոր տարեթիվը։

Պարբերագիրքը մի շարք հոդվածներով նշել է Մ. Նալբանդյանի մահվան 80-ամյակը, Հ. Հակոբյանի ծննդյան 80-ամյակը, Դ. Դեմիրճյանի գրական գործունեության 50-ամյակը, Վ. Տերյանի մահվան 25-ամյակը, Դ. Սարյանի գրական գործունեության 25-ամյակը։

Լայն տեղ է տրված պարբերագրքում Ավ. Իսահակյանի ծննդյան 70-ամյակին։ 1945 թ. նոյեմբերին Սովետական Հայաստանի բարեկամների Ընկերակցությունը Բեյրութում կազմակերպեց հանդիսավոր երեկո՝ նվիրված Ավ. Իսահակյանին։ «Նոր ուղի»-ն այդ կապակցությամբ տպագրել է ընդարձակ ինֆորմացիա և հատվածներ բանախոսների ելույթներից։

Հայ գրողների և, մասնավորապես, սովետահայ հեղինակների, ստեղծագործությունները աշխատավորների շրջանում պրոպագանդելու նպատակով «Նոր ուղի»-ն կազմակերպել է մի շարք գրական երեկոներ ու դասախոսություններ։ Այդպիսի դասախոսություններ են կարդացվել Ս. Կապուտիկյանի, Ադավնու և Հ. Շիրազի առանձին ժողովածուների վերաբերյալ, սակայն այդ նյութերը պարբերագիրքը չի տպագրել։ «Նոր ուղի»-ում շատ ամփոփ ձևով հաղորդումներ են տրվել միայն երկու գրական երեկույթների մասին, որոնք նվիրված են եղել Ն. Զարյանին և Ստ. Զորյանի «Պապ թագավոր» պատմական վեպին։

«Նոր ուղի»-ի հետաքրքիր նյութերից է Վ. Քամրակի հոդվածը՝ նվիրված Միսաք Մանուշյանի հիշատակին։ Պետք է նշել, որ դա Մ. Մանուշյանի մասին Մերձավոր Արևելքի հայ մամուլում լույս տեսած առաջին նյութերից էր, որ ծանոթացնում էր ընթերցողների լայն շրջաններին ֆրանսիական դիմադրական շարժման անվեհեր մարտիկ-բանաստեղծի հերոսական կյանքին։

Խոսելով Մ. Մանուշյանի գեղագիտական հայացքների մասին, Վ. Քամրակը գրում է, թե նա ծիծաղելի էր գտնում «արվեստը արվեստի համար» սկզբունքի կողմնակիցներին, պաշտպանում էր ռեալիստական արվեստը և Վ. Հյուգոյի նման կրկնում էր. «Զվարճացնելը լավ է, դաստիարակելը ավելի լավ է. գրագետին դերը զանգվածները ուսուցանելուն և դաստիարակելուն մեջ կկայանա»։

«Նոր ուղի»-ն անդրադարձել է ֆրանսիական դիմադրության հայ հերոսներից մեկին ևս՝ Հայկ Դպիրյանին, տպագրելով իր էջերում նրա երիտասարդական տարիքի մի անտիպ հոդվածը՝ «Խոովք և երիտասարդություն» խորագրով։ Սփյուռքահայ մամուլը քիչ է գրել Հ. Դպիրյանի մասին։ Այդ տեսակետից «Նոր ուղի»-ի նախաձեռնությունը արժանի է ուշադրության։ Հոդվածի առթիվ խմբագրական ծանոթագրության մեջ պարբերագիրքը գրում է .«Հայկ Դպիրյան ֆրանսական ռեզիստանսի մեր այն հերոս հրամանատարներեն է, որոնք ֆաշիզմի դեմ մղվող զինյալ պայքարին մեջ բռնի կերպով ստրկացված ժողովուրդներու ազատագրության համար ամեն ինչ, նույնիսկ իրենց կյանքը զոհեցին։ Տարիներ տևող գաղտնի պայքարե մը ետք, հրամանատար Արտեն (Հայկ Դպիրյան) ձերբակալվեցավ 1944-ին ու նացիներու կողմե գնդակահարվեցավ Ֆրանսիայի Բրոնթ գյուղին մոտ»[6]։

«Նոր ուղի»-ն, ինչպես ասացինք, կարճ կյանք ունեցավ, բայց և իր համեստ ավանդը ներդրեց առաջավոր գաղափարների արմատավորման այն պրոցեսում, որ սկիզբ էր առել սփյուռքում, այդ թվում և Մերձավոր Արևելքի հայ գաղութներում դեռևս երկրորդ աշխարհամարտից առաջ, և հասունացավ ու ամրապնդվեց պատերազմում Սովետական Միության տարած փայլուն հաղթանակից հետո։

«Նոր ուղի»-ն իր ժամանակին կարողացավ արձագանքել Լիբանանի և Սիրիայի երիտասարդության հետաքրքրող ամենահրատապ հարցերին։ Կարևորագույնը դրանցից հետպատերազմյան զանգվածային հայրենադարձությունն էր։ Պարբերագիրքը բավականին աշխատանք տարավ նաև սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման գործում, պրոպագանդեց Սովետական Հայաստանի նվաճումները տնտեսության, մշակույթի և մասնավորապես գրականության բնագավառում։

---

6 «Նոր ուղի», հատ. 3, էջ 133։